



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եղվարդի Օրհուս կենտրոնի 2014թ.
հունվար- դեկտեմբեր ամիսների
Կատարած աշխատանքների մասին

2014 թվականին ՀՀ Օրհուս կենտրոնները շարունակել են իրենց առաքելությունը՝ ուղղորդվելով Օրհուսի կոնվենցիայով (տեղեկատվության մատչելիություն, հասարակության ներգրավվածություն որոշումներ կայացնելու գործընթացում և արդարադատության մատչելիություն): Հավատարիմ մնալով իրենց առաքելությանը հարթակ են հանդիսացել քննարկումների քաղաքացիական նախաձեռնությունների, հանդիպումների ու էկոլոգիական մշակույթի ձևավորման համար, կապող կամուրջ են հանդիսացել հասարակություն-ՏԻՄ ասպարեզում, հենվելով Օրհուսի կոնվենցիայի երեք հիմնադրույթների վրա՝ նպաստել շրջակա միջավայրի պահպանությանն ու համայնքների կայուն զարգացմանը:

Հայաստանի Օրհուս կենտրոններն այս տարի իրենց պաշտոնական Գործունեությունն սկսել են մարտի 1-ից, սակայն աշխատանքը և ոչ մի րոպե կանգ չի առել՝ սկսած հունվարի 10-ից:

Օրհուս կենտրոնների աշխատանքը ընթացել է ըստ համակարգողների «Օառայությունների մատուցման պայմանագրի» հավելված 2-ում հաստատված Տեխնիկական առաջադրանքի, որն էլ իր հերթին կազմվել է Օրհուս կենտրոնների ճանապարհային քարտեզի հիման վրա և համաձայնեցվել է «Բլեջան» ՀԿ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի միջև ստորագրված պայմանագրով:

Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում Եղվարդի Օրհուս կենտրոնը միայնակ կամ այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացրել է 42 միջոցառում, այդ թվում տեղեկատվության մատչելիության ուղղությամբ 31 միջոցառում, հասարակության մասնակցության ուղղությամբ 13, էկոլոգիայի ուղղված 19 միջոցառում, որոնց մասնակցել են ընդհանուր թվով 653 մարդ, որից 378 տղամարդն 272 կին: Ընդհանուր առմամբ տարածք է տրամադրվել 3 անգամ տարբեր քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների: /Կից ֆայլով կարող եք տեսնել Օրհուս կենտրոնների վիճակագրական հաշվետվությունն ավելի մանրամասն/:



- ✓ Եղվարդի ՕԿ-ը նախաձեռնել կամ աջակցել է էկոկրթական 19 միջոցառման կազմակերպմանը՝ ՀԿ-ների ներկայացուցիչների, ուսանողների, երիտասարդների, ուսուցիչների ներգրավմամբ, մարզում առկա շրջակա միջավայրի հիմնախնդիրների, ինչպես նաև Օրիուսի Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրականացման վերաբերյալ կենսաբազմազանություն, կենսաբազմազանությունը որպես գյուղական համայնքների զարգացման գրավական, բնության հուշարձաններ, անտառների պահպանություն, էկոտուրիզմ, հանքարդյունաբերություն, ջրային ռեսուրսներ թեմաներով:



- ✓ Մասնավորապես Եղվարդի Օրիուս կենտրոնի և երկու համագործակից հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացվել է մեծամասշտաբ տեղական և միջազգային երկու էկոկրթական ծրագիր ինչպես ՀՀ-ից երիտասարդների, այնպես էլ եվրոպացի երիտասարդների մասնակցությամբ:



- ✓ Տեղեկատվական տարբեր միջոցներով և եղանակներով՝ կայք-էջեր, տեղեկագրեր, Տեղեկատվական ստենդներ, հոդվածներ և այլն, աջակցել առկա բնապահպանական տեղեկատվության տարածմանը և հանրության լայն շրջանների իրազեկության Մակարդակի բարձրացմանը՝ նպաստելով բնապահպանական տեղեկատվության Հասանելիությանն ու մատչելիությանը (օգտագործելով www.aarhus.am կայքի, Կենտրոնի կողմից նախաձեռնված տեղական էլեկտրոնային ցանցերի հնարավորությունները):

✓ Եղվարդի ՕԿ-ի համակարգողը է երկու միջազգային դասընթացների.

➤ 07-17.08-ին
մասնակցել է
բնապահպանական
կազմակերպության
կողմից
Լատվիայում
YEE
միջազգային
կողմից
"Միջազգային
ծրագրերի
ազդեցությունն
ու
նշարունակականությունը"
թեմայով
բնապահպանական
միջազգային
դասընթացի:



➤ 26.10-06.11.2014թ. Ռումինիայում
մասնակցել է "A+ performance"
միջազգային դասընթացի, որի
թեման հասարակության
մասնակցությունն էր,
մասնավորապես երիտասարդ
սերնդի դերն ու
նշանակությունը որոշումների
կայացման գործընթացներում:



✓ Եղվարդի Օրհուս կենտրոնը եռամսյակային հաշվետվություններ է ներկայացրել ծրագրի ղեկավարին: Կենտրոնի փորձագետների խորհրդի նիստ է հրավիրվել տարվա մեջ երկու անգամ, ներկայացվել 2014թ. գործունեության վերաբերյալ տեղեկատվություն և տարեկան հաշվետվություն:

✓ Օրհուս կենտրոնի կողմից ընթացիկ միջոցառումների վերաբերյալ համառոտ հաշվետվություն և նյութեր են ներկայացվել (միջոցառման արձանագրությունը, լուսանկար, գրանցման թերթիկ, տեսանյութ, օրակարգ, հայտարարություն, շնորհանդես և այլն) ծրագրի ղեկավարին և PR մենեջերին՝ ըստ սահմանված կարգի:

Եղվարդի Օրհուս կենտրոնի
համակարգող՝ Ռ. Մանյան